




Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՄԵՌՈՆԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ Ս (Թովմաս Ագուլեցու անտիպ տաղերից)

1969 թվականին, Էջմիածնի Մայր Աթոռում տեղի ունեցած մեծագործների առթիվ, մենք հրատարակել էինք ԺԸ դարի առաջին կեսի տաղերգու Թովմաս Ագուլեցու մի երկարաշունչ բանաստեղծությունը՝ «Բան ունաչափ վասն սրբալոյս մեռոնի», հանելով Երևանի պետական Մատենադարանի № 25 ձեռագրից¹: Հեղինակի այս գործը ուներ և իր հիշատակարանը, որի համաձայն շարադրված էր 1729 թվականին, հետևաբար՝ Կարապետ Ուլնեցու կաթողիկոսության օրով կատարված մեծագործների առթիվ:

Մեր այդ հրատարակությունից հետո Նորայր եպս. Պողարյանի ցուցակի միջոցով իրազեկ էինք դարձել, որ Երուսաղեմի № 536 ձեռագիրը պարունակում է Թովմաս Ագուլեցու գրչին պատկանող մի շարք անտիպ ուրիշ գործեր, որոնց թվում մեռոնին նվիրված մի այլ գովերգություն՝ «Տաղ ի վերայ սրբալոյս մեռոնի»²: Ուստի, հետամուտ լինելով հավաքելու Թովմաս Ագուլեցու բոլոր տաղերը, վերջերս դիմել էինք Ծախե արքեպ. Աննայանին, որը Երուսաղեմից սիրահոժար կերպով մեզ ուղարկեց № 536 ձե-

ռագրի այդ նյութերի լուսապատճենները, և դրանով այսօր հնարավորություն ունենք հրատարակության հանձնելու հեղինակի այս նորահայտ մեծագործությունը ևս՝ Էջմիածնում տեղի ունեցող նոր մեծագործների (1976 թ. սեպտ. 26) առթիվ:

Ձեռագրում ոչ մի տվյալ չկա այն մասին, թե հեղինակը ո՞ր թվականին է գրել իր այս տաղը:

Բնագիրը հրատարակում ենք նույնությամբ, ինչպես որ է ձեռագրում: Որպես գրչական վրեպ՝ ուղղել ենք միայն մեկ բառ. **գուդ**-ը դարձրել ենք **գուտ** (տուն 11, տող 3). իսկ երկու բառ վերականգնել ենք՝ բաց թողնված տառի լրացմամբ. **կամեալ-կա[զ]մեալ** (տուն 1, տող 1) և **ձա[յ]նի** (տուն 7, տող 3): Մեկ բառ համարում ենք անծանոթ. **ծալեցեալ** (տուն 8, տող 3): Անծանոթի կերպարանք ունի նաև **քոց** բառը, որ գտնվում է հետևյալ նախադասության մեջ.

Քոց կամակի յօրինակի ընթացեալ (տուն 6, տող 3):

Բայց գտնում ենք, որ **քոց**-ը անծանոթ բառ չէ, այլ պարզապես **քո** ստացական դերանվան հոգնակի տրականն է՝ «քոնե-րին» (քո [հավատացյալ]ների), արևմտյան հայերենով՝ «քուկիներուդ»: Դա հասկանալի է դառնում հաջորդող բառերի լուսաբանմամբ: **Կամակ** նշանակում է «ախորժելի իր», «հիվանդի սրտի ուզած ուտելի-

¹ Հ. Ս. Անասյան, Թովմաս Ագուլեցին և նրա մեծագործությունը, «Էջմիածին» (ամս.), 1969, № Թ և № Ժ-ԺԱ:

² Նորայր եպս. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 553—554:

քը»³. օրինակ նշանակում է «նմանություն»⁴ և ըստ այսմ՝ յօրինակի նշանակում է «ըստ նմանության», «որպես». իսկ ընթացեալ՝ «տարվելով-բաշխվելով»: Ուրեմն՝ նախադասության թարգմանությունը կլինի այսպես. «Որպես կամակ՝ տարվելով-բաշխվելով քո [հավատացյալ]ներին...»:

Հեղինակը մի քանի տեղ բացատրական հոլովի ի նախդիրը կրճատել է՝ հարմարվելու համար տաղաչափության պահանջներին. չարեաց, վերին շնորհաց, հրեշտակաց և քէն փխ. ի չարեաց, ի վերին շնորհաց, ի հրեշտակաց և ի քէն (տուն 2, տող 3. տուն 8, տող 1 և 2. տուն 10, տող 4):

**ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԵՌՈՆԻՆ
Ի ՆՈՅՆ ԹՈՎՄԱՍ ՏԱՌԱՊԵԱԼ
ՔԱՀԱՆԱՅԷ
(Ձեռ. № 536)**

1. Թագ լուսեղեն կա[զ]մեալ հրեղեն հրաշացեալ, Շընունդ տղայոց պատճառ շնորհաց սուրբ մեռուն. Իւղ միւթեղեն բան յանեղեն սքանչացեալ, Հիմըն Հայոց հեղեալ յերկնից սուրբ մեռուն:

2. Որակդ է իւղ ծառ բազմաճիւղ բարձրացեալ, Դեղ ներգործող մեղաց սըրբող քաղցրացեալ, Դիւաց վանող չարեաց փըրկող զօրացեալ, Մարդկանց ծընող շնորհաց բաշխող սուրբ մեռուն:

3. Վիրաց դու դեղ զարմանազեղ գանձ բացեալ, Չեղըզ զօրեղ մանկանց մորեղ սանձ կացեալ,

³ Հմմտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Ա, Վեներտիկ, 1836, էջ 1039: Սահակ վրդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 326: Հր. Աճառյան, Հայերեն գաւառական բառարան (Լեմկյան ազգագրական ժողովածու, հտ. Թ), Թիֆլիս, 1913, էջ 542:

⁴ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. Բ, Վեներտիկ, 1837, էջ 1034:

Իբր ըզկանթեղ մեզ լուսազեղ կազմեցեալ, Դաժառ բիրեղ շնորհօք համեղ սուրբ մեռուն:

4. Մայր ամենից քրիստոնէից ծանուցեալ, Թիկունք վեհից թագ արքայից կացուցեալ, Ծաղկանց մեծից շնորհօք յերկնից մածուցեալ, Տեառն բոլորից դու կամակից սուրբ մեռուն:

5. Այս աննըման զըմուռ շուշան գերացեալ, Խունկ պալասան հրիկ պատուական զօրացեալ, Կիմամոնն այն ընդ հալուէին եռացեալ, Իւղ սըրբազան կենաց մարդկան սուրբ մեռուն:

6. Սէր յոգնակի կեանք բազմակի քեւ լըցեալ, Ամմահ ազգի դրախտ յայտնակի դու բացեալ, Քոց կամակի յօրինակի ընթացեալ, Առնումբ հանդէս յաղթանակի սուրբ մեռուն:

7. Իծման կերպիւ աճման ոճի լիացեալ, Հոգւոյն շնորհիւ կենաց բանի միացեալ, Վերնոց ձա[ն]նի երգարանի հիացեալ, Դու իւղ ազնիւ Տեառն պատիւ սուրբ մեռուն:

8. Բախճան կենաց վերին շնորհաց փայլեցեալ, Եւ հրեշտակաց հրեղեն զօրաց մայլեցեալ, Անհուն բարեաց հրաշագործաց ծալլեցեալ, Վանիչ դիւաց հալիչ մեղաց սուրբ մեռուն:

9. Իբր ըզճագունք մատաղ մանկունք ծընեցեալ, Անգին ակունք հօրն որդեկունք զըրեցեալ, Արք հըմտագունք սուրբք իմաստունք քեւ լըցեալ, Ամենեցունց բոլոր թիկունք սուրբ մեռուն:

10. Յաւոց հընար յոյժ օգտակար յայտնեցեալ, Որք են տըկար քեւ առնուն կար զօրացեալ, Որք գան յօժար խորհըրդաբար օծեցեալ, Առնուն քէն ճար լինին արդար սուրբ մեռուն:

11. Էին անմիւթ հոգւոյն հրանիւթ դու կեցեալ, Ըզմիտք մեր բութ յեսանի քոյղ սըրեցեալ, Ընդ ծաղկանց միւթ շնորհք սուրբ եւ զուտ
ճըմլեցեալ,
Առ Թովմայս փուտ շարժեալ ի գութ սուրբ մեռուն:

